

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ կառավարության կողմից մշակված ճանապարհաշինական ծրագրեր իրականացնող պետական կառույց է: Ներկայումս ՊՈԱԿ-ը իրականացնում է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը» (ՀՀՃՄՆԾ), Վանաձոր-Ալավերդի Մ6 ճանապարհի վերակառուցման ծրագիրը (Մ-6), Կենսական նշանակության ճանապարհների վերականգնման ծրագիրը (ԿՆՃ) և Բագրատաշենի մաքսակետի կամրջի շինարարության (ԲԿ) ծրագիրը:

Կազմակերպությանը վերաբերող մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ www.tpio.am կայքից: «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ը հրավիրում է հետաքրքրված անձանց հայտեր ներկայացնելու ՊՈԱԿ-ի ներքոնշյալ թափուր պաշտոնների համար՝

N	Պաշտոնի անվանումը	Հայտի ներկայացման վերջնաժամկետը
1	Գլխավոր տնօրենի տեղակալ	18.09.2018
2	ԿՆՃ Ծրագրի ղեկավար	18.09.2018
3	Իրավաբան	18.09.2018
4	Գնումների կրտսեր մասնագետ	18.09.2018

Բոլոր նշված պաշտոնների աշխատանքային պարտականությունները, իմացության և որակավորման պահանջները ներկայացված են www.tpio.am կայքում:

Հայտը պետք է ներկայացնել հայերեն և անգլերեն vacancy@tpio.am էլեկտրոնային հասցեին՝ առարկայի տողում (subject line) նշելով պաշտոնի անվանումը կամ ներկայացնել «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գրասենյակ՝ ք.Երևան. Տիգրան Մեծի 4, 7-րդ հարկ հասցեով: Յուրաքանչյուր թափուր պաշտոնի համար սահմանված են վերոհիշյալ ժամկետները: Նշված ժամկետից ուշ ստացված կամ պահանջվող ձևաչափին չհամապատասխանող հայտերը չեն դիտարկվի:

Հայտերը կարող են ներկայացվել մեկ կամ ավելի պաշտոնների համար:

Հայտը պետք է պարունակի հետևյալը.

1. ուղեկցող նամակ (առավելագույնը՝ 1 էջ);
2. ինքնակենսագրություն (Resume կամ CV);
3. երկու երաշխավորողների անունները և կոնտակտային տվյալները: